

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՆՈՒՄՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ԳԿՄԾ)» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 ապրիլի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչարյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (գեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի նոյեմբերի 30-ին Նոռնում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ Գյուղապրնեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների սպեղծման ծրագիր (ԳԿՄԾ)» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 2011 թվականի մարտի 14-ին Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետագույնով 2010 թվականի նոյեմբերի 30-ին Նոռնում ստորագրված՝ Նայաստանի Նանրապետության եւ Գյուղապնդետության զարգացման միջազգային հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների սրեղծման ծրագիր (ԳԿՄԾ)» ֆինանսավորման համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Նայաստանի Նանրապետության եւ Գյուղապնդետության զարգացման միջազգային հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների սրեղծման ծրագիր (ԳԿՄԾ)» ֆինանսավորման համաձայնագիրը (Նամաձայնագիր) ստորագրվել է 2010 թվականի նոյեմբերի 30-ին՝ Նոռնում:

2. Նամաձայնագրով Գյուղապնդետության զարգացման միջազգային հիմնադրամը (Նիմնադրամ) Նայաստանի Նանրապետությանը (Փոխառու) րրամադրում է ֆինանսավորում (փոխառություն եւ դրամաշնորհ)՝ Նայաստանի Նանրապետությունում «Գյուղական կարողությունների սրեղծման ծրագրին» (Ծրագիր) աջակցելու նպատակով:

Փոխառության գումարը կազմում է ութ միլիոն ինը հարյուր հազար փոխառության հատուկ իրավունք (8 900 000 ՓՏԻ), իսկ դրամաշնորհի գումարը՝ երեք հարյուր երեսուն հազար փոխառության հատուկ իրավունք (330 000 ՓՏԻ):

Փոխառությունը րրվում է հաստատուն պայմաններով՝ առանց րոկոսագումարի, րարեկան սպասարկման վճարը կկազմի մեկ րոկոսի երեք քառորդը (0.75%), վճարումները պետք է լինեն կիսամյակային՝ փոխառության սպասարկման վճարի արժույթով եւ 20 րարի ժամկետով՝ ներառյալ 10 րարի արրոնյալ ժամկետ, որն սկսվում է Նիմնադրամի գործադիր խորհրդի կողմից փոխառությունը հաստատվելու պահից:

Փոխառության սպասարկման վճարի արժույթն ԱՄՆ դոլարն է:

Ծրագիրն իրականացվելու է Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերում:

Ծրագրի նպատակն է՝ Նայաստանի Նանրապետությունում գյուղական աղքատության նվազեցումը:

Ծրագրի խնդիրներն են՝

- ստեղծել պտղի եւ ընկուզեղենի փոփոխական կենսոնակ արտադրություն գյուղական մանրածավալ արտադրողների մասնակցությամբ.

- պտղի եւ ընկուզեղենի արտադրության համար անհրաժեշտ ծառայությունների մատուցման նպատակով ստեղծել կառույց՝ հեղուկացում ամբողջությամբ մասնավորեցնելու պայմանով.

- վերացնել ենթակառուցվածքների խոչընդոտները, որոնք սահմանափակում են փոփոխական ակտիվ գյուղաբնակների կողմից գյուղական փոփոխության առեւտրայնացմանը մասնակցելու հնարավորությունները:

Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից.

- ա) աջակցություն պտղի եւ ընկուզեղենի արտադրությանը, մասնավորապես, «Նայկական միրգ» բաժնետիրական ընկերության ստեղծում, որն իրականացնելու է հետեւյալ գործառնությունները.

- հիմնել գլխամասային փնկարան, հյուսվածքային լաբորատորիա եւ մայրուք՝ արմատակալների եւ այլ սորտերի բազմացման համար.

- հիմնել այգիներ, ստեղծել պտղի եւ ընկուզեղենի արտադրության հարվածի ֆերմերների հետ պայմանագրային հարաբերություններ եւ կազմակերպել այգիների կառավարման ոլորտում ուսուցում պայմանագրային հարաբերությունների մեջ ներգրավված ֆերմերների համար.

- հիմնել պտղի եւ ընկուզեղենի փաթեթավորման եւ վերամշակման կառույցներ.

- աջակցել շուկայավարմանը տեղական եւ միջազգային շուկաներում, կազմակերպել վաճառքի լոգիստիկան եւ մատուցել բրենդավորման, գովազդի եւ հետվաճառքային ծառայություններ.

- բ) գյուղական ենթակառուցվածք, մասնավորապես, աջակցություն այն հասարակական ենթակառուցվածքների կառուցմանն ու վերանորոգմանը, որոնք տեղակայված կլինեն լեռնային անապահով համայնքներում, այդ թվում՝ ջրամատակարարման, գազաֆիկացման սարքերի, հեղեղաջրերի հեռացման սարքերի կառուցումը, ինչպես նաեւ գյուղական ճանապարհների եւ այն օժանդակ կառույցների կառուցմանն աջակցումը, որոնք կհամարեն եւ կամրապնդեն Ծրագրի ներդրումները.

- գ) Ծրագրի կառավարում, մասնավորապես, Փոխառուի կողմից Ծրագրի ղեկավար կոմիտեի հիմնում, որը պատասխանատու կլինի Ծրագրի ընդհանուր կառավարման եւ իրականացման համար: Ծրագրի աշխատանքների մոնիտորինգը, Ծրագրի ընդհանուր պլանավորումը եւ բյուջեի կազմումը, ենթակառուցվածքային աշխատանք-

ների վերահսկումն իրականացնելու և Ծրագրի վերլուծությունների եւ կառավարման գրասենյակը:

Նամաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվա հնգամյակը Ծրագրի ավարտի օրն է:

Նամաձայնագիրն ուժի մեջ է մտնում Նայասրանի Նանրապետության օրենսդրությանը համապատասխան վավերացման մասին փաստաթուղթը Նիմնադրամի սրանալու պահից:

3. Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետությունը, մասնավորապես, սրանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) փոխառության հիմնական գումարը Նիմնադրամին վերադարձնել 20 հավասար կիսամյակային մասնաբաժիններով, յուրաքանչյուրը՝ 445 000 ՓՆԻ՝ սկսած 2021 թվականի փետրվարի 1-ից եւ ավարտել 2030 թվականի օգոստոսի 1-ին.

բ) փրամադրել Ծրագրի ֆինանսավորման իր մասնաբաժինը՝ մոտավորապես՝ 3 300 000 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ ենթակառուցվածքների համար, ինչպես նաեւ անհրաժեշտ միջոցներ հարկերի վճարման համար, ներառյալ մաքսային եւ սոցիալական վճարումները.

գ) Ծրագրի ենթակառուցվածքների հաշվին նախապես փոխանցել մեկ միլիոն հարյուր հազար (1 100 000) ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ Ծրագրի շրջանակներում ենթակառուցվածքներին նպարակաուղղված ներդրումներին օժանդակելու նպատակով.

դ) ստեղծել «Նայկական միրգ» բաժնետիրական ընկերություն, որի բոլոր բաժնեմասերի սեփականատերերն սկզբնական շրջանում պետք է լինի Նայասրանի Նանրապետությունը, սակայն բաժնեմասերն աստիճանաբար պետք է փոխանցվեն ռազմավարական ներդրողներին եւ «Նայկական միրգ» բաժնետիրական ընկերության հետ պայմանագրային հարաբերությունների մեջ ընդգրկված ֆերմերներին՝ «Նայկական միրգ» բաժնետիրական ընկերության բաժնեմասերի վաճառքի միջոցով.

ե) սուբսիդավորման ֆինանսավորման համաձայնագիր կնքել «Նայկական միրգ» բաժնետիրական ընկերության հետ, որով կսահմանվի, որ Նայասրանի Նանրապետությունը պայմանագրեր կկնքի «Նայկական միրգ» բաժնետիրական ընկերության հետ վերջինիս ֆինանսավորում փրամադրելու համար՝ հետևյալ կերպով.

- 1.7 մլն ԱՄՆ դոլար՝ կապիտալի տեսքով.
- 1.5 մլն ԱՄՆ դոլար՝ դրամաշնորհի տեսքով, եւ
- 7 մլն ԱՄՆ դոլար՝ փոխառության տեսքով:

4. Նայասփանի Նանրապետության կառավարությունը 2011 թվականի մարտի 24-ին հավանություն է փվել սույն գործով քննության առարկա Նամաձայնագրին:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ համաձայն սահմանադրական դատարանում Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ, Նայասփանի Նանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի ներկայացրած բացատրության՝ Նայասփանի Նանրապետության կառավարության կողմից «Նայկական միրգ» բաժնետիրական ընկերությանը 7 մլն ԱՄՆ դոլար փոխառությունը փրվելու է 10 փարի ժամկետով, որից 3-ը՝ արտոնյալ, փարեկան 1.5% փոկոսադրույքով (այսինքն՝ 7 մլն ԱՄՆ դոլար փոխառությունը կառավարությանը կվերադարձվի ավելի խիստ պայմաններով, քան այն պայմանները, որով Նայասփանի Նանրապետության կառավարությունը վերադարձնելու է իր փոխառությունը Նիմնադրամին): Բացի դրանից, «Նայկական միրգ» բաժնետիրական ընկերության մասնավորեցման շնորհիվ պետությունը կվերականգնի կանոնադրական կապիտալում իրականացված իր ներդրումը եւ, ավելին, կարող է ունենալ նկատելի եկամուտ: Դրամաշնորհն օգտագործվելու է ընկերության գործառնական ծախսերի իրականացման համար՝ մինչեւ այգիների պրոդակտի դառնալն ու որոշակի շահույթ ապահովելը, եւ մասնավորեցման ընթացքում այդ գումարների վերականգնման խնդիր չի առաջանա:

«Նայկական միրգ» բաժնետիրական ընկերությանը փոխառության միջոցներից հարկացվող 6 720 000 ՓՆԻ-ին համարժեք գումարն ամբողջությամբ ծախսվելու է այգիների հիմնադրման եւ այդ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով, իսկ 330 000 ՓՆԻ-ին համարժեք գումարը նախատեսված է գործառնական եւ պահպանման ծախսերի, ինչպես նաեւ՝ միջազգային խորհրդարվության ձեռքբերման համար:

Ծրագրով առաջին անգամ փորձ է արվում նորագույն տեխնոլոգիաներով արդյունաբերական այգեգործություն հիմնադրել Նայասփանի Նանրապետության երեք՝ Արագածոտնի, Տավուշի եւ Վայոց Ձորի մարզերում (թվով 36 համայնքներ): Նորագույն տեխնոլոգիաները ներառելու են՝

- այգիների կաթիլային ոռոգման համակարգի ստեղծում.

- հեղուկ պարարտացման համակարգի կիրառում (նույն կաթիլային համակարգի միջոցով ներարկվելու է նաեւ պարարտանյութը, ըստ նախնական հաշվարկների՝ նշված երկու համակարգերի համար 1 հա հաշվով ծախսվելու է 4000-4200 ԱՄՆ դոլար).

- կարկրապաշտպան ցանցերի տեղադրում (1 հա հաշվով՝ շուրջ 5000 ԱՄՆ դոլար):

Նախնական փուլում ներկրվելու, իսկ հետագայում տեղում արտադրվելու են վիրուսազերծ արմատակալներ, որոնք ապահովելու են ծառերի առողջական վիճակը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաեւ, որ «Նայկական միրգ» բաժնեփիրական ընկերությունը պետք է միջնորդ հանգույց հանդիսանա պտուղների վերջնական արտադրողների եւ նշյալ պտուղներն օգտագործողների միջեւ (վերամշակող ընկերություններ, գյուղմթերքներ արտահանող ընկերություններ, առեւտրային ցանցեր, վերջնական սպառողներ): Վերջինս ենթադրում է, որ «Նայկական միրգ» բաժնեփիրական ընկերությունը պետք է ունենա միջազգային չափորոշիչներին համապատասխան նախնական վերամշակման, տեսակավորման եւ սառեցման ժամանակակից համակարգեր, ինչը պետք է ստեղծվի Ծրագրի միջոցների հաշվին:

5. Սահմանադրական դափարանը նաեւ արձանագրում է, որ.

ա) Նամաձայնագրում մի շարք դրույթներ ձեւակերպված են անորոշ եւ ոչ հստակ, մասնավորապես, կապված.

- «Նայկական միրգ» բաժնեփիրական ընկերության մասնավորեցման (այդ թվում՝ ժամկետների) հետ, որը պետք է իրականացվի Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի պահանջներին խիստ համապատասխան.

- Նամաձայնագրով Նայաստանի Նանրապետության կողմից ստանձնվող ֆինանսական պարտավորությունների իրականացման կոնկրետ աղբյուրների, այդ թվում՝ Նամաձայնագրի նախաբանի «Բ» կետով նախատեսված Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ)՝ միջազգային զարգացման հիմնադրամից (ՕՖԻԴ հիմնադրամ) Ծրագրի ֆինանսավորմանն աջակցության համար մոտ քսան միլիոն (20 000 000) ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական օժանդակություն ստանալու՝ Նայաստանի Նանրապետության մրադրության իրականացման ընթացքի (այդ թվում՝ ժամկետների) հետ.

բ) «Նայկական միրգ» բաժնեփիրական ընկերության փնտրանների խորհրդում կառավարության ներկայացուցիչների կարգավիճակի հետ, որոնց նշանակումը պետք է իրականացվի Նայաստանի Նանրապետության օրենսդրության պահանջներին խիստ համապատասխան:

Սահմանադրական դափարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կադարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության,

այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Նամաձայնագիրն առավել էս պահանջում է լուրջ վերահսկողական համակարգ՝ միջոցների նպատակային օգտագործման եւ Նայաստանի Նանրապետության սրանձնած միջազգային պարտավորությունների պարշած կատարումն ապահովելու առումով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի նոյեմբերի 30-ին Նռնում ստորագրված՝ Նայաստանի Նանրապետության եւ Գյուդարնտության զարգացման միջազգային հիմնադրամի միջեւ «Գյուդական կարողությունների սրեղծման ծրագիր (ԳԿՄԾ)» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 ապրիլի 2011 թվականի
ՍԴՈ-952